ԵԱՀԿ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն Երևանյան գրասենյակ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Բաց կառավարման գործընկերություն ՀԱՅԱՍՏԱՆ

ԲԿԳ հայաստանյան գործընթացներ.

Մոնիտորինգի գործիքներ քաղհասարակության համար

Մեթոդաբանություն
նախագիծ

Նախաբան

2011թ. սեպտեմբերին Հայաստանի Հանրապետությունը միացել է "Բաց կառավարման գործընկերություն" նախաձեռնությանը: Նախաձեռնության նպատակն է քաղաքացիական հասարակության ակտիվ ներգրավմամբ նպաստել կառավարման համակարգի բարելավմանը, խթանել վերջինիս արդյունավետությունը՝ բարձրացնելով պետություն-քաղաքացի հարաբերությունների թափանցիկության, վստահելիության և հաշվետվողականության մակարդակը:

ԲԿԳ արժեքներն են.

1. Տեղեկատվության հասանելիությունը,
2. Հանրային մասնակցությունը,
3. Հաշվետվողականությունը,
4. Տեխնոլոգիաները եւ նորարարությունը թափանցիկության եւ հաշվետվողականության համար:

ԲԿԳ մարտահրավերն են.

1. հանրային ծառայությունների բարելավում,
2. հանրային վստահության բարելավում,
3. հանրային միջոցների ավելի արդյունավետ կառավարում,
4. անվտանգ համայնքների ստեղծում,
5. կորպորատիվ հաշվետվողականության բարելավում:

2013 թվականի վերջից ՀՀ կառավարությունը նախաձեռնել է ԲԿԳ-Հայաստան երկրորդ գործողությունների ծրագրի նախագծի մշակման գործընթացը: Նախագիծը կազմվել է ինչպես կառավարության, այնպես էլ քաղաքացիական հասարակության ներկայացրած առաջարկությունների հիման վրա:

ԲԿԳ շրջանակում ստեղծվել են երեք աշխատանքային խմբեր, որոնցում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը հետեւյալն է.

- "Բաց կառավարման գործընկերություն" նախաձեռնությունում ՀՀ մասնակցության գործողությունների ծրագրից բխող աշխատանքները համակարգող աշխատանքային խումբ – ՔՀԿ 8 ներկայացուցիչ (աշխատանքային խմբի 24 անդամից),
- "Բաց կառավարման գործընկերություն" նախաձեռնությունում ՀՀ մասնակցության գործողությունների ծրագրից բխող աշխատանքները համակարգող աշխատանքային խումբ – ՔՀԿ 8 ներկայացուցիչ (աշխատանքային խմբի 14 անդամից),
- Բաց կառավարման գործ – ՔՀԿ 7 ներկայացուցիչ եւ 1 անկախ փորձագետ (աշխատանքային խմբի 14 անդամից):

ԲԿԳ-Հայաստան երկրորդ գործողությունների ծրագրով ՀՀ կառավարությունը ստանձնել է 11 պարտավորություն: 11 պարտավորություններից 7-ը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների առաջարկություններն են: Ընդհանուր առմամբ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները 54 առաջարկություն են ներկայացրել, որոնցից 7-ը ներառվել է ԲԿԳ-Հայաստան երկրորդ գործողությունների ծրագրում:

Սույն մեթոդաբանության նպատակն է ԲԿԳ արժեքների հիման վրա եւ ԲԿԳ-ի հայաստանյան առանձնահատկությունները հաշվի առնելով՝ գնահատել[1] ԲԿԳ-Հայաստան երկրորդ գործողությունների ծրագիրը:

Գնահատման ընդհանուր նկարագրությունը

ԲԿԳ-Հայաստան երկրորդ գործողությունների ծրագրի (այսուհետ նաեւ՝ Ծրագիր) հիմնական գնահատումը[2] նախատեսում ենք իրականացնել Ծրագրի ժամանակագրական իրականացման փուլերով՝

- Ծրագրի նախագծի մշակում եւ ընդունում,
- Ծրագրով ստանձնած պարտավորությունների իրականացման ընթացք,
- Ծրագրի պարտավորություններից յուրաքանչյուրի գնահատում,
- Ծրագրով ստանձնած պարտավորությունների արդյունքի գնահատում:

Յուրաքանչյուր փուլի համար մեթոդաբանությամբ առաջարկելու ենք գնահատման հնարավորինս արդյունավետ գործիքներ: Գնահատման գործիքները ընտրելիս հաշվի ենք առել այն ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են տվյալ գործիքը կիրառելու համար:

---

[1] “Գնահատում” եզրույթը ներառում է ոչ միայն բառարանային իմաստով գնահատական տալը, այլ սույն մեթոդաբանության շրջանակներում ունի նաեւ հանրային վերահսկողության բաղադրիչ: Այսինքն, “գնահատում” եզրույթի մեջ ներառված են հանրային վերահսկողության իրականացման մեխանիզմները:

[2] Սույն մեթոդաբանությունը ներկայացվում է ԲԿԳ-Հայաստան երկրորդ գործողությունների ծրագրի գնահատումն իրականացնելու նպատակով՝ հաշի առնելով այն, որ Ծրագիրն այժմ իրականացման փուլում է, սակայն մեթոդաբանությունը կիրառելի է հաջորդ ծրագրերի իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար նույնպես:

Ծրագրի յուրաքանչյուր փուլի գնահատումը (Ծրագրի իրականացման նկատմամբ վերահսկողությունը) իրականացվելու է նաեւ ըստ ԲԿԳ արժեքների:

Ծրագրի գնահատման համար սույն մեթոդաբանությամբ առաջարկում ենք երեք հիմնական գործիքի կիրառում՝

- Հարցաշար – հարցաշարում ներառված հարցերի պատասխանների վերհանման արդյունքում պատասխաններին տոկոսային արժեք կամ որեւէ (առավելագույնից նվազագույն) միավոր բաշխելու արդյունքում ամբողջ հարցաշարի արդյունքում ձեւավորվում է գնահատման ենթակա Ծրագրի տվյալ փուլի իրականացման գնահատականը: Հարցաշարերը կարող է կազմված լինել ինչպես միայն Ծրագրի մի փուլ գնահատելու համար, այնպես էլ ամբողջ ծրագրի իրականացումը գնահատելու համար: Ծրագրի ամբողջ իրականացումը գնահատելու համար կազմված հարցաշարը բաղկացած կլինի Ծրագրի առանձին փուլերի հարցաշարերից: Տվյալ դեպքում հարցաշարի հարցերի պատասխաններին տրվող տոկոսային արժեքները համամասնորեն կնվազեցվեն, միավորայինները՝ ոչ: Սույն մեթոդաբանությամբ ներկայացնելու ենք հացաշարերին ներկայացվող ընդհանուր պահաջներ՝ առանձին դեպքերում նախատեսելով տարբեր հարցաշարերի նախապատրաստումը: Հարցաշարերը կարող են պարունակել “այո/ոչ” հարցեր կամ բազմակի ընտրության (multiple choice) հարցեր:
- Վերլուծություն[3] – Տվյալ դեպքում սույն մեթոդաբանությամբ նախատեսում ենք վերլուծության գործիքն օգտագործել ինչպես ամբողջ Ծրագրի իրականացումը, այնպես էլ Ծրագրի առանձին փուլի իրականացումը, ՀՀ կառավարության առանձին պարտավորության իրականացումը, Օրագրի առանձին բաղադրիչ (օրինակ՝ ժամկետները) վերլուծելու համար:
- Տեղեկատվություն ստանալու հարցումներ (Հարցումներ) – Սույն մեթոդաբանությամբ որպես Ծրագրի իրականացման գնահատման (Ծրագրի իրականացման նկատմամբ վերահսկողության) գործիք նախատեսում ենք ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված տեղեկատվության ազատության իրավունքի կիրառումը, որն առարկայացել է“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքում՝ գրավոր հարցումներով պետական կառավարման մարմիններից տեղեկություն ստանալու իրավունքի ամրագրմամբ:

Առաջարկվող գործիքները փոխլրացնող են. գնահատման իրականացման համար կարող են օգտագործվել ինչպես բոլոր գործիքները հավասարապես, այնպես էլ մի գործիքը կարող է օգտագործվել որպես այլ գործիքի միջոցով գնահատումն իրականացնելու նախապայման (ապահովել տեղեկատվությամբ, վիճակագրական տվյալներով, կարծիքներով եւ այլն):

Թեեւ Ծրագրի գնահատման համար սույն մեթոդաբանությամբ առաջարկում ենք երեք հիմնական գործիք, սակայն խրախուսելի են նաև այլ գործիքների կիրառումը, որպես օժանդակ միջոցներ՝ վերջնանպատակին հասնելու համար:

---

[3] Սույն մեթոդաբանության շրջանակներում “վերլուծություն” եզրույթի տակ հասկանում ենք նաեւ մշտադիտարկումը (մոնիթորինգ), ինչպես նաեւ տեքստային շարադրմամբ եւ/կամ վիճակագրական տվյալներով ցանկացած վերլուծություն:

Գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվական բազան

ԲԿԳ-Հայաստան երկրորդ գործողությունների ծրագրի իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները պետք է ազատ լինեն իրենց հետաքննական-վերահսկողական առաքելությունը իրականացնելիս: Սակայն սույն մեթոդաբանության շրջանակներում առաջարկում ենք տեղեկատվության մի քանի աղբյուրներ, որոնց օգտագործումը Ծրագրի իրականացման տարբեր փուլերում էականորեն կարող է օգնել Ծրագրի իրականացումը գնահատելիս:

Անկախ հետազոտական մեխանիզմ – Անկախ հետազոտական մեխանիզմը (ասուհետ նաեւ՝ ԱՀՄ) անկախ հետազոտողի կողմից իրականացվող հետազոտություն է, որը ամբողջական եւ համապարփակ վերլուծության է ենթարկում գործողությունների տվյալ ծրագրի իրականացման որակը՝ համադրելով այն ԲԿԳ արժեքների հետ: Թեեւ անկախ հետազոտական մեխանիզմն ինքնին գհանատման գործիք է (վերլուծություն), սակայն Ծրագրով ստանձնած պարտավորությունների արդյունքի գնահատման համար՝ Ծրագրի արդյունքների գնահատման փուլում նաեւ մեծածավալ տեղեկատվություն պարունակող ռեսուրս է՝ տեղեկատվություն ստանալու հարցումների նախապատրաստման, պաշտոնական պարզաբանումներ պահանջելու եւ համեմատական վերլուծություններ անելու համար:

Ինքնագնահատման զեկույց – Ինքնագնահատման զեկույցը ՀՀ կառավարության կողմից գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ սեփական գնահատականն է, հաշվետվությունը: Թեեւ ինքնագնահատման զեկույցն ինքնին ենթակա է գնահատման, դրա պետք է հրապարակվի, դրա վերաբերյալ քաղաքացիական հասարակությունը կարող է կարծիքներ ներկայացնել, սակայն միեւնույն ժամանակ ինքնագնահատման զեկույցում առկա տեղեկությունը հիմք է տեղեկատվություն ստանալու հարցումների նախապատրաստման, պաշտոնական պարզաբանումներ պահանջելու եւ համեմատական վերլուծություններ անելու համար:

Պաշտոնական տեղեկատվություն – Կառավարության տնօրինության տակ գտնվող տեղեկությունների հասանելիությունը ԲԿԳ արժեքներից է եւ առանձին գնահատման է ենթակա այն, թե ինչպես եւ ինչ ծավալով է կառավարությունը հասարակության համար հասանելի դարձնում իր տրամադրույթան տակ եղած տեղեկատվությունը: Միաժամանակ, պաշտոնական այն տեղեկությունները, որոնք հրապարակվել են (հրապարակվում են), կարող են օգտագործվել որպես ինֆորմացիոն առիթ՝ կառավարության այս կամ այն պարտավորության իրականացումը գնահատելու համար:

Պետական բյուջե, դրամաշնորհներ – ՀՀ կառավարության ստանձնած պարտավորությունները պահանջում են որեւէ ֆինանսավորում: Պարտավորությունները կարող են իրականացվել պետական բյուջեի հաշվին ամբողջապես, մասամբ, կամ միջազգային կազմակերպությունների կողմից ՀՀ կառավարությանը տրամադրած դրամաշնորհների հաշվին: Հետեւաբար յուրաքանչյուր հաջորդ տարվա բյուջեի պլանավորումը ցուցիչ է, թե ինչպես եւ որքանով է

պետությունը ԲԿԳ-ի շրջանակներում կառավարության ստանձնած պարտավորությունների իրականացման համար պատասխանատվություն կրում:

Զանգվածային լրատվամիջոցների հրապարակումներ – Հանրային հսկիչի իր դերի իրականացման ընթացքում զանգվածային լրատվամիջոցները բազմիցս անդրադառնում են քաղաքական այնպիսի հարցերի, որոնք վերաբերում են կամ սահմանակցում են պետական ռեսուրսների ոչ բարեխիղճ կառավարման, կոռուպցիայի դրսեւորումների, պետության ստանձնած պարտավորությունների ոչ բարեխիղճ կատաման հետ: Ուստի Զանգվածային լրատվամիջոցները երբեմն կամ հաճախ կարող են անդրադառնալ այնպիսի խնդիրների, որոնք վերաբերում են ԲԿԳ շրջանակներում ՀՀ կառավարության ստանձնած այս կամ այն պարտավորության կատարմանը կամ որոնք մատնանշում են կառավարության կողմից ԲԿԳ արժեքներին համապատասխան կամ անհամապատասխան գործելու դեպքեր:

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների սեփական փորձ եւ հրապարակումներ – Հաշվի առնելով, որ ԲԿԳ շրջանակներում ստեղծված աշխատանքային խմբերում ներառված են նաեւ քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, ինչպես նաեւ այն, որ կառավարության ստանձնած պարտավորությունների մի մասը կարող է իրականացվել (իրականացվում է) հասարակական կազմակերպությունների աջակցությամբ՝ համատեղ՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների սեփական փորձը, հրապարակումները, պարտավորությունների իրականացմանն ուղղված առանձին գործողությունները նույնպես կարող են արժեքավոր տեղեկատվություն պարունակել Ծրագրի գնահատման համար:

Գնահատումը

ԲԿԳ-Հայաստան երկրորդ գործողությունների ծրագրի նախագծի մշակման եւ ընդունման գնահատումն իրականացվելու է հիմնականում Հարցաշարի եւ Վերլուծության միջոցով: Հարցումները կարող են հանդես գալ որպես օժանդակ միջոց: Այս գործիքակազմը առաջարկում ենք՝ հաշվի առնելով այն, որ ԲԿԳ-Հայաստան երկրորդ գործողությունների ծրագրի նախագծի մշակման եւ ընդունման փուլն արդեն անցել է: Սույն մեթոդաբանությամբ գործողությունների հաջորդ ծրագրերի նախագծերի մշակման եւ ընդունման փուլում Հարցումները կարող են ծառայել որպես հիմնական գործիք:

Ծրագրով ստանձնած պարտավորությունների իրականացման ընթացքը գնահատելու համար առավել հարմար գործիքներ են Վերլուծությունը եւ Հարցումները:

Ծրագրով ստանձնած պարտավորությունների արդյունքներիի գնահատումը կրկին առաջարկում ենք իրականացնել Հարցաշարի եւ Վերլուծության միջոցով: Այս դեպքում եւս Հարցումները կարող են հանդես գալ որպես օժանդակ միջոց:

Հարցաշար

Ծրագրի նախագծի մշակման եւ ընդունման եւ Ծրագրով ստանձնած պարտավորությունների արդյունքների գնահատումն իրականացվելու համար կազմված հարցաշարը ունի 4 բաժին, որոնք համապատասխանում են ԲԿԳ-ի "Տեղեկատվության հասանելիություն", "Հանրային մասնակցություն", "Հաշտվողականություն" եւ "Տեխնոլոգիաները եւ նորարարությունը թափանցիկության եւ հաշվետվողականության համար" արժեքներին:

Հարցաշարի **Տեղեկատվության հասանելիությունը** բաժնում տեղ են գտել հարցեր որոնք վերաբերում են Ծրագրի նախագծի նախաձեռնման, մշակման, անցկացվող միջոցառումների (ներառյալ՝ հանրային լսումներ, համաժողովներ, աշխատանքային քննարկումներ եւ այլն) վերաբերյալ տեղեկատվության պրոակտիվ հրապարակմանը պետության կողմից, հրապարակման ժամկետների ողջամտությանը, հրապարակումների պարբերականությանը:

Հարցաշարի **Հանրային մասնակցությունը** բաժնում տեղ են գտել հարցեր որոնք վերաբերում են Ծրագրի նախագծի մշակման փուլում քաղաքացիական հասարակության մասնակցությանը, հանրային լսումների անցկացմանը, հանրային լսումների քանակին, մասնակցող ՔՀԿ-ների քանակին, համաժողովներում, աշխատանքային քննարկումներում ՔՀԿ-ների մասնակցության հնարավորություններին, կարծիքներ, առաջարկություններ եւ դիտողություններ ներկայացնելու հնարավորություններին:

Հարցաշարի **Հաշվետվողականությունը** բաժնում տեղ են գտել հարցեր որոնք վերաբերում են Ծրագրի նախագծի մշակման եւ ընդունման փուլում ՔՀԿ-ների կարծիքների, առաջարկությունների եւ դիտողությունների ընդունմանը, դրանք Ծրագրի նախագծում ներառելուն, ներառված առաջարկությունների քանակին (համամասնությանը կառավարության առաջարկությունների հետ), մերժվող առաջարկությունների մերժումների պատճառաբանվածությանը, մերժումների ձեւին՝ արդյոք պարզաբանումները, առաջարկությունների մերժումները կրել են պաշտոնական բնույթ, Ծրագրում ներառված պարտավորությունների անհրաժեշտության պատճառաբանվածությանը, հիմնավորվածությանը: Այս բաժնում նախատեսվել են հարցեր Ծրագրի նախագծում ներառված առաջարկությունների որակի վերաբերյալ (արդյոք հասարակության կարծիքով Ծրագրի նախագծում ներառվել են իրենց առաջարկություններից կարեւորագույնները, թե համեմատաբար նվազ հանրային նշանակություն ունեցողները):

Հարցաշարի **Տեխնոլոգիաները եւ նորարարությունը թափանցիկության եւ հաշվետվողականության համար** բաժնում տեղ են գտել հարցեր որոնք վերաբերում են կառավարության կոմունիկացիոն հմտություններին՝ ինչպես են կապ ապահովել հասարակության հետ, արդյոք հրապարակված տեղեկատվությունը հրապարակվել է այնպես, որպեսզի հասանելի լինի ամբողջ հանրությանը (հնարավորինս շատ մարդկանց), արդյոք օգտագործվել են նոր տեխնոլոգիաները՝ օպերատին հաղորդակցություն ապահովելու համար, արդյոք կառավարություն-ՔՀԿ հանդիպումները, աշխատանքային քննարկումները, համաժողովները լուսաբանվել են պաշտոնական կայքերով, արդյոք Ծրագրի վերաբերյալ կառավարությունը նախաձեռնել է մամուլի ասուլիսներ, հարցազրույցներ:

Ծրագրով ստանձնած պարտավորությունների արդյունքների գնահատման համար
Հարցաշարը գտնում ենք, որ պետք է ունենա 11 պարտավորությունների կատարման վերաբերյալ 33 հարց, որոնցից 11 հարց պարտավորությունների կատարման ամբողջականության վերաբերյալ (որքանով են կատարվել պարտավորությունները ըստ էության), 11 հարց պարտավորությունների կատարման ժամկետների վերաբերյալ, 11 հարց պարտավորությունների կատարման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման (տեղեկատվության հրապարակման) վերաբերյալ:

Հարցաշարի համար սույն մեթոդաբանությամբ առաջարկում ենք բազմակի ընտրության հնարավորությամբ հարցեր: Յուրաքանչյուր հարցը կունենա պատասխանի 4 տարբերակ, որոնցից յուրաքանչյուրը կունենա համապատասխան միավորային արժեք:

Օրինակ՝
1. Ամբողջությամբ է կատարվել արդյոք X պարտավորությունը
    1. Ամբողջությամբ[4] – 3 միավոր
    2. Մեծամասամբ[5] – 2 միավոր
    3. Կիսով չափ[6] – 1 միավոր
    4. Չի կատարվել[7] – 0 միավոր

Վերլուծություն
Սույն մեթոդաբանության շրջանակում առաջարկում ենք որպես գնահատման[8] հիմնական գործիք, որը կիրառելի է Ծրագրի իրականացման յուրաքանչյուր փուլում:

Իրականացվելու են վերլուծություններ՝ ԲԿԳ արժեքների պահպանման վերաբերյալ.
- Տեղեկատվության հասանելիության,
- Հանրային մասնակցությունը,
- Հաշվետվողականությունը,
- Տեխնոլոգիաները եւ նորարարությունը թափանցիկության եւ հաշվետվողականության համար

Առաջարկում ենք վերլուծությունների իրականացման երկու ֆորմատ՝
    1. 4 վերլուծություն՝ ըստ ԲԿԳ արժեքների՝ ըստ փուլերի 4-ական եւ/կամ արդյունքների ամփոփման փուլում 4 վերջնական:
    2. 2 միջանկյալ վերլուծություն՝ ըստ փուլերի եւ 1 վերլուծություն արդյունքների ամփոփման փուլում վերջնական:

---
[4] 75% - 100%
[5] 50% - 75%
[6] 25% - 50%
[7] 0% - 25%
[8] Այս հատվածում Վերլուծությունը որպես հիմնական գործիք դիտարկում ենք “Գնահատում” եզրույթի գնահատողական հատկության համատեքստում, այն չենք դիտարկում որպես վերահսկողության իրականացման հիմնական գործիք:

Իրականացվելու են վերլուծություններ ՀՀ կառավարության ստանձնած պարտավորությունների վերաբերյալ:

Առաջարկում ենք իրականացնել 22 վերլուծություն Ծրագրով ստանձնած պարտավորությունների իրականացման ընթացքում, եւ 1 վերլուծություն արդյունքների ամփոփման փուլում վերջնական:

Ծրագրով ստանձնած պարտավորությունների իրականացման ընթացքում 22 վերլուծություններից յուրաքանչյուր երկուսը վերաբերելու են 1 պարտավորության: Ժամանակագրական առումով 1-ին վերլուծությունը պետք է վերաբերի տվյալ պարտավորության կատարման համար սահմանված ժամկետի 1/3-ին, երկրորդ վերլուծությունը՝ 2/3-ին: Վերջնական վերլուծությունը վերաբերելու է ստանձնած տվյալ պարտականության կատարման ժամկետների ավարտին՝ արդյունքին:

Հարցումներ

Սույն մեթոդաբանության շրջանակում առաջարկում ենք որպես վերահսկողության[9] հիմնական գործիք, որը կիրառելի է Ծրագրի իրականացման յուրաքանչյուր փուլում:

Տեղեկություն ստանալու հարցումները առաջարկում ենք որպես օժանդակող միջոց Ծրագրի նախագծի մշակման եւ ընդունման եւ Ծրագրով ստանձնած պարտավորությունների արդյունքի գնահատման փուլերում վերլուծությունների իրականացման համար:

Ծրագրով ստանձնած պարտավորությունների իրականացման ընթացքում Հարցումները հանդես են գալու որպես հիմնական գործիք՝ ՀՀ կառավարության ստանձնած պարտավորությունների կատարման պատշաճությունը, ժամկետների պահպանումը ստուգելու համար: Սույն մեթոդաբանությամբ առաջարկում ենք յուրաքանչյուր պարտավորության կատարման ընթացքի վերաբերյալ լիազոր պետական մարմնին ներկայացնել 4-ական հարցում պարտավորության կատարման ընթացքի վերաբերյալ: Ժամանակագրական առումով 1-ին հացումը պետք է վերաբերի տվյալ պարտավորության կատարման համար սահմանված ժամկետի 1/4-ի ավարտին, 2-րդ հարցումը՝ 1/2-ի ավարտին, 3-րդ հարցումը՝ 3/4-ի ավարտին եւ 4-րդ հարցումը՝ պարտավորությանը կատարման ժամկետի ավարտին: Արդյունքում նախատեսում ենք առնվազն 44 հարցում պարտավորությունների վերաբերյալ:

[9] Այս հատվածում Հարցումները որպես հիմնական գործիք դիտարկում ենք “Գնահատում” եզրույթի հանրային վերահսկողության հատկության համատեքստում, այն չենք դիտարկում որպես զուտ գնահատում իրականացնելու հիմնական գործիք: